ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N 02/03/2 641
31 05 ----------2018թ.

«ՍԵՆԴԱ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սաֆարյան

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 24.05.2018թ. թիվ 03/26-1/9337-18 գրությունը՝ (կցվում է) ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը միակողմանի լուծում է մարզպետարանի և «Սենդա» ՍՊԸ-ի միջև 23.04.2018թ. կնքված «ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-1» ծածկագրով գնման պայմանագիրը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող ՖՍՏՋ Վարչություն
Յու. Մուշեղյան
060650618

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

№ 03/26-1/9337-18
24.05.2018թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ

Ի պատասխան 17.05.2018թ.
թիվ 01/08/2437-18 գրության

Հարգելի պարոն Խլղաթյան

Ուսումնասիրելով վերոնշյալ գրությունը՝ հայտնում ենք հետևյալը.

էլեկտրոնային գնումների համակարգում մասնակիցները չափաբաժիններն ընտրում և գնային առաջարկներ են ներկայացնում համակարգում քարտուղարի կողմից նախապես սահմանված կառուցվածքի հիման վրա: Միևնույն սկզբունքով են իրականացվում նաև ներկայացված հայտերի գնահատման, ընտրված մասնակիցների որոշման և պայմանագրի շնորհման գործընթացները:

16.02.2018թ. հայտարարված <ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01> ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստային մասում և պայմանագրերի կառավարման ու գնումների հաշվետվողականության մոդուլում (այսուհետ՝ մոդուլ) թվով 49 չափաբաժինների հերթական համարները խախտվել են, իսկ ապրանքների կրկնվող անուններ ունեցող չափաբաժինների մասով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման, ինչպես նաև քարտուղարի կողմից պայմանագրերի շնորհման գործառույթներն իրականացվել են անտեսելով չափաբաժինների հերթական համարների և անվանումների անհամապատասխանությունը, որի պատճառով խափանվել է գնման ընթացակարգի բնականոն ընթացքը և տեխնիկապես հնարավոր չէ շտկել առաջացած խնդիրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԹԱՄԱՉՅԱՆ

Կատարող՝ ՊԳԳՀ վարչություն
հեռ.՝ 011800331